ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում*

Կատարող՝ Լուսինե Մկրտչյան

Դպրոց՝ Արմավիրի մարզի Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ Շախմատ

Կազմակերպություն՝ Հայաստանի Շախմատի Ակադեմիա,

Պատասխանատու՝ Վ.Սարգսյան

Երևան 2023

Բովանդակություն

1.Բովանդակություն էջ2

2.Ներածություն էջ3

3.Նպատակ և խնդիրներ.....էջ4

4.Գրականության վերլություն.

4.1 Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում .....էջ 5

5. Հետազոտության ընթացք և մեթոդներ.

5.1 Արժեքային համակարգի ձևավորումը «Շախմատ» առարայի դասավանդման ընթացքում՝.....էջ 6

6.Եզրակացություն..... .էջ11

7.Օգտագործված գրականության ցանկ..... ..էջ12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ձգտումներն ու արարքները, վարքն ու հույզերը, դրսևորումներն ու մտահաղացումները կախված են մեր արժեքներից՝ թե ինչին ենք մենք դավանում և ինչով ենք առաջնորդվում: Հենց այս պատճառով էլ ցանկացած ոլորտի դիտարկում անհրաժեշտ է սկսել նախ և առաջ իր արժեքային հենքի և սեփական (անձի կամ հասարակության մակարդակում) արժեքային համակարգի համադրմամբ:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա. Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Նոր սերնդի արժեքային համակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում բավականին լուրջ անելիքներ ունի արդի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ներկայիս մարտահրավերները, գիտական առաջընթացը, երկրի առջև ծառացած խնդիրներրը պահանջում են, որ նոր սերունդը լինի կիրթ, մտածող, տեղեկացված, ստեղծագործող, կյանքի փորձություններին դիմակայող, կանգուն և ուժեղ:

Հետազոտության նպատակը տարբեր հնարների, մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների արժեհամակարգի ձևավորումն է, վերլուծական կարողությունների, քննադատական մտքի զարգացումը, որ մարդը չվերածվի միայն տնտեսական արժեք ունեցող մարդկային կապիտալի՝ անձնային թույլ որակներով, մարդկային պարզունակ ընկալումներով:

Թեման **արդիական** է, քանի որ տեխնիկական հեղաշրջման այս հարափոփոխ դարում, երբ ամեն ինչ մեքենայացվում է, թվայնացվում, այժմ գերիշխող է անհատի էգոն: Մինչդեռ փոխհարաբերություններում կարևոր են մարդկայինը, խիղճը արթուն պահելը, ազնվությունը, անարդարությանն արձագանքելը, հանդուրժողականությունը, կարեկցանքը, գութը, էմպատիան: Ցավ զգում են շատերը, բայց ոչ բոլորն են ունակ ուրիշի ցավով ապրելու, ապրումակցելու:

Խնդիրներ.

- Ինչ արժեհամակարգ կձևավորվի սովորողների մոտ «Շախմատ» առարկային դասավանդման ընթացքում:
- Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները, դրանց դրսևորումը «Շախմատ» առարկային դասավանդման ընթացքում:
- Ինչ մեթոդներով կհաջողվի ձևավորել արժեհամակարգը «Շախմատ» առարկային դասավանդման ընթացքում:

Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է:

1. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

Դպրոցը երեխաների համար ոչ միայն գիտելիք ստանալու հաստատություն է, այլ հոգևոր դաստիարակության կենտրոն, ինչն անվիճելիորեն ընդունում են բոլորը՝ մանկավարժ թե ծնող, տեսաբան թե արվեստագետ:

Հոգևոր զարգացման ընթացքը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ ընտանիք, փողոց, շրջապատող հասարակություն և, իհարկե, դաստիարակության մեթոդի ընտրություն:

Թերևս գիտելիք փոխանցելուց ավելի՝ դպրոցի առաքելությունն այսօր նախ և առաջ երեխայի մեջ մարդու և շրջապատի հանդեպ սեր ու հարգանք ձևավորելն է, սովորեցնելը գնահատել ազնվությունը, բարությունը, լինել արի, հանդուրժող, աշխատանքում՝ պարտաճանաչ: (Մեջբերում Կրթադիտակ Մանկապատանեկան կայքի հոդվածից. Լ. Մարգարյանի դիտարկումներից)

ՀՀ-ում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչի՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի գծով սովորողների պատրաստվածությունը ներկայացնող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է ապահովի ուսումնական հաստատությունը: Հանրակրթական տարրական ծրագիրը պետք է միտված լինի ՀՀ պետական չափորոշչում ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը: Ծրագրի շրջանավարտը պետք է՝

- ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին.
- ճանաչի և հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և ներկայացնի պետական և ավանդական տոների հիմնական բովանդակությունը.
- ճանաչի և հոգատար վերաբերմունք ցուցաբերի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների հանդեպ., կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ.
- ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը.
- ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի, հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի տարբեր ձևաչափերով, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը.
- ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում., գտնի իր սխալները և քայլեր անի դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար և այլն:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Արժեքային համակարգի ձևավորման նպատակն է ձևավորել հայրենասեր, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ, կիրթ և ժամանակակից գիտական նորույթներին տիրապետող, արդարամիտ, լավատես, ազգային ինքնագիտակցություն, արժանապատվություն, ձգտում, կամք և պատասխանատվության զգացում ունեցող անձինք:

2.Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում:

Ինչպես ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական ողջ գործընթացն է իրականացնում սովորողների արժեքների ձևավորման խնդիրները, այնպես էլ այդ գործընթացում իր ուրույն տեղը զբաղեցնող «Շախմատ» առարկան: Շախմատի յուրաքանչյուր դաս ևս ընդգրկում է ՀՊՉ որևէ կարողունակության ձևավորման կոնկրետ նպատակ: «Շախմատ» առարկան թույլ է տալիս, որ երեխան խաղի միջոցով կայացնի որոշումներ և պատասխանատվություն կրի դրանց համար: Այստեղ կձևավորվի նպատակասլացություն, ինքնուրույն անհատականություն: Շախմատային իրավիճակները փոխվում են կատարված յուրաքանչյուր քայլից հետո, և սովորողը ակամայից գնահատում է այդ փոփոխությունը, կատարում է նոր նպատակադրում, գտնում է նոր ուղիներ, անընդհատ հարմարեցվում է տարբեր իրավիճակներում: Խաղալիս երեխաները հասկանում են իրենց թույլ տված սխալները, սովորում են վերլուծել, իրականացնել ինքնագնահատում: Դա կնպաստի ինքնաճանաչողության զարգացման և կատարած սխալներն ուղղելու ճանապարհներ, միջոցներ գտնելու հմտության ձևավորմանը, վերլուծական կարողությունը: Յուրաքանչյուր քայլից առաջ մտածում և իրականացնում են ներքին պլանավորում: Վերջնախաղերի ժամանակ ստեղծում են խաղաքարերի համագործակցություն, մատային խնդիրներ լուծելիս բազմաթիվ տարբերակներ դիտարկելիս՝ ընտրում են լավագույնը, այսպես զարգանում է սովորողի դիվերգենտ (բազմատարբերակ) մտածողությունը: Ռազմավարությունն ուսումնասիրելի համեմատում են, համադրում և կանխատեսում: Սովորողները մարտավարական հնարքներն իրականացնելիս կայացնում են այլընտրանքային որոշումներ:

Հատկապես ուշագրավ են սովորողների արժեքային հաամակարգի հետևյալ բաղադրիչները, որոնց ձևավորմանը կարող է նպաստել Շախմատ առարկան :

- Հայրենասիրություն, ազգային արժանապատվություն
- Համագործակցություն, աջակցել, քաջալերել ընկերներին, ապրումակցել
- Այլընտրանքային, դիվերգենտ /բազմատարբերակ/ մտածողություն

- Հայրենասիրություն, ազգային արժանապատվություն

Շախմատ խաղն հենց սիզբից ներկայացվում է որպես պայքար, պաշտպանություն, շեշտվում են սահման, բանակ հասկացությունները: Հաճախ երեխաները նմանեցնում են խաղադաշտի սահմանային գծերը հայրենիքի սահմաններին, Արքան՝ երկրի ղեկավարին: Եվ վերջապես շախմատում կա զինվոր: Շատ կարևոր է զինվոր խաղաքարի թեման առանձնահատուկ սիրով ներկայացնել՝ երեխաների մեջ դաստիարակելով զինվորի վեհ ու փառապանծ կերպարի առավելությունը, զինվորի կարևորությունը բոլորիս կյանքում, կենսակերպում և աշխատանքում: Կապել կյանքը շախմատի հետ ուղիղ համեմատականությամբ՝ նշելով, որ շախմատային ողջ պայքարի արդյունավետությունը, վերջնախաղի անսպասելի հաղթական ավարտը, պայմանավարված է զինվորով: Հայրենասիրության դաստիարակմանը նպաստող արդյունավետ միջոց հանդիսացավ «Զինվորը շախմատի ոգին է» / Ֆ.Ֆիլիդոր/ խորագիրը կրող դաս-միջոցառումը, որն անցկացվեց Արմավիրի մարզի Ալաշկերտի միջնակարգ դպրոցում 2022թ. դեկտեմբերի 6-ին: Սովորողներն արտասանում էին խոսքեր, որոնք ամբողջովին արտացոլում էին զինվորի կարևորության գաղափարը, հպարտությամբ փառաբանում զինվորի քաջությունն ու նվիրական կերպարը և արտահայտում իրենց սերը դեպի թանկ ու նվիրական հայրենիքը: Հատուկ շեշտադրում եղավ հայրենիքը չլքելու, հայրենիքում ապրելու, շենացնելու, արարելու և հզորազնելու գաղափարին:

Միջոցառումից հետո քննարկումների ժամանակ, երբ արտահայտում էին մտքեր երեխաների մոտ զգացվում էր յուրահատուկ հարգանք զինվորի հանդեպ և անձնուրաց սեր դեպի թանկագին հայրենիքը:

Ազգային արժանապատվություն ձևավորելու վառ օրինակներ են հայազգի շախմատային չեմպիոնները: Դասերը նվիրված չեմպիոններին թույլ են տալիս սովորողներին ուումնասիրելու, ճանաչելու հայազգի չեմպիոններին, ծանոթանալու նրանց կյանքին, հաղթանակների պատմությանը և հպարտանալու: Քանի որ թեման հայրենիքի և հայրենասիրությանն էր նվիրված, երկրորդ դասարանում, որպես հաջորդ դասարանների ծրագրային նախագիտելիք, զինվորին

նվիրված դաս միջոցառման ավարտին աշակերտները խաչբառի արդյունքում դուրս բերելով համապատասխան տառերը ստացան.

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Իսկապես մեծ էր հպարտությունն ու ոգևորությունը. աշակերտները ծանոթացան Տիգրան Պետրոսյանի խոսքերին.***«Ձեզանից ոչ բոլորը կդառնան շախմատիաստներ, սակայն ոչ ոք չի ափսոսա այն ժամանակը,որ տրվում է շախմատին, քանի որ այն կօգնի ձեզ ցանկացած մասնագիտության մեջ»:***

Այնուհետև հիշեցին, թե որտեղ են տեսել Տիգրան Պետրոսյանի կիսանդրին՝ Արամվիր քաղաքի շախմատի դպրոցի առջև, իսկ նկարը՝ ՀՀ թղթադրամի վրա: Վեր հանեցին այն գաղափարը, որ հայազգի նշանավոր շախմատիստ, աշխարհի չեմպիոն Տ. Պետրոսյանը իսկապես մեծություն է և հայ ժողովրդի փառքն ու պարծանքը: Շախմատի աշխարհի չեմպիոնների՝ Վ.Ստեյնից, Է.Լասկեր, Մ.Տալ, Ա. Ալյոխին, Բ. Ֆիշեր և այլն, ինչպես նաև հայազգի մյուս չեմպիոնների, որոնց հետ ծանոթանում են քիչ ավելի ուշ՝ Լևոն Արոնյան, Վլադիմիր Հակոբյան, Տիգրան Լ.Պետրոսյան, Էլինա Դանիելյան, վառ կերպարներն են աշակերտների երևակայության մեջ, երբ նրանք արժանապատիվ հաղթանակի ակնկալիքով մեծ մոտիվացիա են ցուցաբերում մրցաշարերի հանդեպ:

Իսկ մինչ այդ շախմատի գործնական խաղերի ժամանակ, երբ աշակերտին հաջողվում է վայելել հաղթանակի բերկրանքը՝ ձևավորվում է կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում:

- Համագործակցություն, աջակցել, քաջալերել ընկերներին, ապրումակցել

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են: Երբ երեխաները՝ արդեն տեսական գիտելիքներով զինված, սկսում են ավելի հաճախ խաղալ շախմատի դասաժամերի ընթացքում, պրակտիկորեն կիրառել գիտելիքները, ակնհայտը առնչվում են այն գաղափարին, որ կարևոր է խաղաքարերի պաշտպանվածությունը և համագործակցությունը: Արդյունավետ հարվածներ կարող է կատարել այն խաղաքարը, որը միայնակ չէ, այլ իր խաղաքարերից մեկի հսկողության տակ է՝ պաշտպանված: Հաճախ շեշտվում է այն միտքը, որ կյանքը նման է շախմատին, այդ օրինակով երեխան շախմատային իրավիճակը համադրելով կյանքի իրավիճակների հետ՝ հասկանում է, որ կյանքում նույնպես ավելի ուժեղ է, հզոր և ունակ այն մարդը, որն իր պլաններն իրականացնում է միասնական համախմբված թիմի հետ միասին: Կյանքում նույնպես կարևոր է ստեղծել այդ թիմը, որը կհամախմբվի մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, որտեղ բոլորը սրտացավ կլինեն միմյանց, կօգնեն, հարկ եղած դեպքում կցուցադրեն քաջալերում և ապրումակցում: Իսկ այդ հարցի նախապայմանն է ընկերներ ձեռք բերելը: Բացի այս, ընկերանալու գաղափար են ձևավորում նաև շախմատի ժամին իրականացվող խմբային աշխատանքները, երբ մեկ առաջադրանքի շուրջ հավաքվում է աշակերտների խումբ և բոլորն ուզում են ինչ որ կերպ օգնեն, որ իրենց խումբը առաջադրանքը պատշաճ կատարի և ամենալավ արդյունքը ցուցաբերի: Այդ ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունը, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն:

- Այլընտրանքային, դիվերգենտ /բազմատարբերակ/ մտածողություն

Մատային խնդիրներ. մի քանի տարբերակ, բազմաթիվ ճանապարհներ, եղանակներ... փորձելով մեկը, հետո մյուսը, երեխան փնտրում է լավագույն ճանապարհը, ամենարդյունավետը՝ բոլոր փորձվածներից: Այդ պատճառով երեխան արդեն գիտակցում է, որ մեկ լուծում մտածելը բավարար չէ, գուցե կա ավելի լավ ճանապարհ, որը կտանի ավելի նկատելի առավելության: Երեխան լարում է իր ուժերը այլ ուղի այլ տարբերակ գտնելու: Արդի ժամանակաշրջանում սա ևս կարևոր է այլընտրանքային, դիվերգենտ /բազմատարբերակ/ մտածողություն ունենալ, ավելի հաղթահարելի կդառնան ժամանակի մարտահրավերները և դրանց դիմակայելը: Շախմատի մատային խնդիրները վերլուծական կարողությունների հետ մեկտեղ սովորողների արժեհամակարգում կձևավորվեն այլընտրանքային, դիվերգենտ մտածողությունն ու ստեղծագործելու ունակությունը:

Շախմատ ուսումնական առարկայի ողջ գործընթացը ընթանում է տեսական մասը՝ խնդիրներ լուծել, գործնական խաղի հետ զուգահեռ: Իսկ երբ երեխան նստում է խաղատախտակի առջև և ինքն է որոշումներ կայացնողը, ինքն է քայլի ընտրություն կատարողը և հանդես է գալիս որպես անհատ, ինքնուրույն մարդ, դա անհատական աշխատանք է: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Խաղի ժամանակ զարգանում է երեխայի ինքնաճանաչողությունը, նա գիտակցում է իր թույլ կողմերն ու ուժեղ կողմերը, գտնում է իր սխալները և դրանք ուղղելու ճանապարհներ փնտրում: Սովորում է ենթարկվել կանոնների, քանի որ դրանց խախտումը իր վնասն է, սովորում է պահպանել կարգը, հնարավորինս ազնիվ լինել, որպեսզի կարողանա դիմացինից ևս պահանջել լինել ազնիվ: Բախվելով հակառակորդի հետ՝ գիտակցում է, որ կյանքում ամեն ինչ չէ որ իրականանում է այնպես ինչպես ինքը կուզեր, այլ հարկավոր է իրավիճակներն ու խնդիրները հանգուցալուծել ի օգուտ իրեն՝ պայաքարելու, աշխատանքի կամ ճկուն մտքի շնորհիվ:

-Դաստիարակված մարդը նա է, ով ցանկանում և կարողանում է հաշվի նստել ուրիշների հետ, նա, ում համար նրբանկատ լինելը ոչ միայն ողջամիտ ու հեշտ է, այլև հաճելի: Դա այն մարդն է, ով հավասարապես բարեհամբույր է և՛ ավագների, և՛ կրտսերների հանդեպ՝ ինչպես տարիքի, այնպես էլ կարգավիճակի առումով:

Դաստիարակված մարդը ոչ մի հանգամանքում ինքն իրեն չի ցուցադրում, խնայում է ուրիշների ժամանակը («Ճշտապահությունը արքաների նրբանկատությունն է»,- ասում է աֆորիզմը), անպայման իրականացնում է այլոց տված խոստումները, իրեն չի թանկացնում, քիթը չի տնկում և միշտ նույն մարդն է՝ տանը թե դպրոցում, բուհում թե աշխատավայրում, խանութում թե ավտոբուսում:

-Եթե մարդը մի մեծ նպատակ ունի, ուրեմն այն պիտի դրսևորվի ամեն ինչում, անգամ ամենաչնչինը թվացող արարքում: Պետք է ազնիվ լինել աննկատ մնացող և պատահական դրվագներում. միայն այդ ժամանակ կարող ես ազնիվ լինել նաև քո մեծ պարտականությունը կատարելիս: Մեծ նպատակը պարուրում է մարդուն ամբողջությամբ, արտահայտվում նրա յուրաքանչյուր քայլում, և չի կարելի կարծել, թե նսեմ միջոցներով հնարավոր է հասնել բարի նպատակների:

Հասնել մեծ նպատակների վատ միջոցներով անհնար է: Պետք է հավասարապես ազնիվ լինել ինչպես մեծ գործում, այնպես էլ փոքրում:

Դ. Լիխաչով, «Նամակներ բարու և գեղեցիկի մասին»

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության թեման ունի կենսական նշանակություն սովորողների համար, իսկ արժեհամակարգի ձևավորումը վճռորոշ է ոչ միայն անհատի կյանքում այլև ողջ հասարակության: Մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի մարդկային վեհ արժեքներ և ժամանակի մարտահարվերներին ինտելեկտով ու զարգացածությամբ դիմակայելուն ունակ:

Շախմատ ուսումնական առարկան իր բովանդակային արժեքներով՝ ճկուն մարտավարություն, հաշվարկված տեխնիկա, դասակարգված ռազմավարություն և ոսումնական առարկայի անբաժան մասը կազմող շախմատ խաղը՝ որպես մտքի խաղ, ինտելեկտուալ ունակություններ պահանջող խաղ, ակներև դրսևորում ունեն սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացում: Սովորողները հարմարվում և կողմնորոշվում են նոր իրավիճակում, առնչվելով փորձությունների, դժվարությունների, պարտությունների հետ կարծես կոփվում են ՝ դառնալով ավելի դիմակայող: Շախմատի դասավանդման ընթացքում կարելի է սովորողների արժեհամակարգում ձևավորել.

- Ազնվություն
- Կարգապահություն
- Համառություն
- Ինքնուրույնություն
- Քննադատականություն
- Այլընտրանքային դիվերգենտ մտածություն
- Հայրենասիրություն
- Ընկերասիրություն
- Համագործակցություն
- Ստեղծագործականություն և վառ երևակայութնուն
- Մտքի ճկություն

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

-Կարելի է կյանքի ամենատարբեր նպատակներ սահմանել: Բայց նպատակ պե՛տք է լինի, այլապես կապրես բույսի նման:Հարկավոր է նաև կյանքի սկզբունքներ ունենալ: Նույնիսկ լավ կլինի դրանք գրառել օրագրում: Բայց որպեսզի օրագիրն «իսկական» լինի, այն ոչ ոքի չի կարելի ցույց տալ. պիտի գրես ինքդ քեզ համար:Կյանքի սկզբունքներ պետք է ունենա յուրաքանչյուրը, սկզբունքներ ձգտումներում, սկզբունքներ վարվեցողության մեջ: Կյանքը պետք է արժանապատվորեն ապրել, որպեսզի հետագայում անցյալդ հիշելիս չամաչես:Արժանապատվությունը պահանջում է բարություն, մեծահոգություն, պահանջում է չլինել խղճուկ եսասեր, լինել ազնիվ ու լավ ընկեր, ուրախություն զգալ այլոց օգնելիս: Արժանապատվորեն ապրելու համար պետք է ունակ լինել հրաժարվելու մանր հաճույքներից. . . և ոչ մանրերից նույնպես:

Ներողություն խնդրելը, սեփական սխալներն ընդունելը ավելի լավ է, քան խուսանավելն ու ստելը: Ստախոս մարդը նախ և առաջ ինքն իրեն է խաբում, որովհետև կարծում է, թե հաջողությամբ խորամանկեց, իսկ իրականում մյուսները հասկանում են դա և միայն բարեկրթությունից ելնելով են լռում:

Դ. Լիխաչով, «Զրույցներ բարու և գեղեցիկի մասին»

Օգտագործված գրականության ցանկ

1. Դ. Լիխաչով, «Զրույցներ բարու և գեղեցիկի մասին»
2. Մուդրիկ Ա. Վ. «Դպրոցականի անձը և նրա դաստիարակության կոլեկտիվում» Երևան,1986թ.,
3. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., «Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում» Երևան 1987թ.,
4. Ա. Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում» Երևանթ, 2002թ.
5. Կրթական քաղաքացիական նախաձեռնություն «Սկզբունքներ, ռեսուրսներ, գործիքներ» Երևան 2019թ.,
6. [1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
7. https://krtaditak.am /դպրոցը-և-երեխայի-հոգևոր-զարգացումը/